Ճիշտ պատասխանի ընտրության ձևաչափ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրաման

Հարց

Գիտության կոմիտեն ունի՝

1) ՀՀ զինանշանի պատկերով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք, ձևաթղթեր և խորհրդանիշ.
2) Կոմիտեի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք և խորհրդանիշ.
3) ՀՀ զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձեւաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
4) ՀՀ զինանշանի պատկերով և հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և խորհրդանիշ:

(3, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 5)

Հարց

Կոմիտեի կառուցվածքում ընդգրկվում են՝

1) Կոմիտեի նախագահի, նախագահի տեղակալի, գլխավոր քարտուղարի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները.
2) Կոմիտեի նախագահը և կառուցվածքային ստերաբաժանումները.
3) Կոմիտեի աշխատակազմը.
4) Կոմիտեի նախագահը, Կոմիտեի նախագահի խորհրդականները և օգնականները:

(1, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 6)

Հարց

Ո՞վ է կառավարում գիտության կոմիտեն՝

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը.
2) ՀՀ վարչապետը.
3) Կոմիտեի նախագահը.
4) ՀՀ կառավարությունը:

(1, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 12)

ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Հարց

Ո՞ր դեպքերում է գործատուն ընդունում անհատական իրավական ակտեր

1) անհատական իրավական ակտեր գործատուն ընդունում է կարգավորելու համար աշխատանքային հարաբերությունները .
2) անհատական իրավական ակտեր գործատուն ընդունում է կարգավորելու համար կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունները .
3) անհատական իրավական ակտեր գործատուն ընդունում է կարգավորելու համար ներքին կարգապահական կանոնները.
4) անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է անհատական իրավական ակտեր.

(4, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 5, մաս 3)

Հարց

Ի՞նչ է համատեղությամբ աշխատանքը

1) համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է.
2) համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է.
3) համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միևնույն գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է.
4) համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակի ընթացքում այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է.

(1, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 99, մաս 1)

Հարց

Ի՞նչ է ամենամյա արձակուրդը

1) ամենամյա արձակուրդն օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար.
2) ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար.
3) ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու համար.
4) ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին աշխատունակությունը վերականգնելու համար.

(2, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 158)

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենք

Հարց

Ո՞րն է համարվում քաղաքացիական ծառայության պաշտոն՝

1) համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող իրավունքներ ու պարտականություններ, մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ պահանջող կառավարման համակարգում տեղակայված, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր.
2) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում ընդգրկված պաշտոն.
3) պետական կառավարման համակարգի պաշտոն.

(1, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 1)

Հարց

Ո՞վ է քաղաքացիական ծառայողը

1) պետական կառավարման համակարգի մարմինների աշխատակից.

2) ՀՀ օրենսդրությամբ պետական կառավարման համակարգի մարմիններում աշխատող պետական ծառայող.

3) ՀՀ քաղաքացի, որն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն և կատարում է այդ պաշտոնին վերապահված մասնագիտական գործունեություն կամ գրանցված է քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում և վարձատրվում է ՀՀ պետական բյուջեից.

(3, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 1)

Հարց

Ի՞նչ է մասնագիտական աշխատանքային ստաժը

1) աշխատանքային ստաժ, որն անհրաժեշտ է տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար.
2) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժ.
3) ստացած բարձրագույն կրթության, իսկ տվյալ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժ, անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից:

(2, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 1)

«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք

Հարց

Ի՞նչ գործառույթներ են իրականացնում կառուցվածքային ստորաբաժանումները

1) կառուցվածքային ստորաբաժանումն իրականացնում է տվյալ պետական մարմնի, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ.
2) կառուցվածքային ստորաբաժանումն իրականացնում է տվյալ պետական մարմնի, ենթակա պետական մարմնի նպատակներից, խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ.
3) կառուցվածքային ստորաբաժանումն իրականացնում է տվյալ պետական մարմնի, ենթակա պետական մարմնի քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ.
4) կառուցվածքային ստորաբաժանումն իրականացնում է տվյալ պետական մարմնի, ենթակա պետական մարմնի նպատակներից, խնդիրներից, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ.

(2, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին»ՀՀ օրենք, հոդված 7, մաս 1)

Հարց

Ինչպիսի՞ն են լինում կառուցվածքային ստորաբաժանումները

1) կառուցվածքային ստորաբաժանումները դասակարգվում են երկու տեսակի՝ առանձնացված և ոչ առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումներ.
2) կառուցվածքային ստորաբաժանումները դասակարգվում են երկու տեսակի՝ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ և ոչ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ.
3) կառուցվածքային ստորաբաժանումները դասակարգվում են երկու տեսակի՝ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ.
4) կառուցվածքային ստորաբաժանումները դասակարգվում են երկու տեսակի՝ կարևոր կառուցվածքային ստորաբաժանումներ և աջակցող կառուցվածքային ստորաբաժանումներ.

(3, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին»ՀՀ օրենք, հոդված 7, մաս 5)

Հարց

Ու՞մ միջոցով է պետական մարմինը գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ձեռք բերում

1) պետական մարմինն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով.
2) պետական մարմինն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է մարմնի ղեկավարի միջոցով.
3) պետական մարմինն գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է քարտուղարության պետի միջոցով.
4) պետական մարմինն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է լիազոր մարմնի միջոցով.

(1, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին»ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1)

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք,

Հարց

Ի՞նչ է հիմնական աշխատավարձը

1) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բազային աշխատավարձի և նույն օրենքով նախատեսված գործակցի արտադրյալ.
2) բազային աշխատավարձի և կոնկրետ գործակցի արտադրյալ.
3) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով բազային աշխատավարձի և նույն օրենքով նախատեսված գործակցի գումար.
4) աշխատանքի ընդունման պայմանագրում նախատեսված աշխատավարձ.

1, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

Հարց

Ո՞վ է սահմանում պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը

1) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով.
2) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը յուրաքանչյուր տարի սահմանում է ՀՀ կառավարությունը.
3) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը յուրաքանչյուր տարի սահմանում է ՀՀ վարչապետը.
4) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով.

1, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1

Հարց

Ե՞րբ է իրականացվում աշխատավարձի հերթական միավոր ավելացումը

1) հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը իրականացվում է աշխատանքային տարին լրանալուց.
2) պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը, իրականացվում է հունվարի 1-ից՝ աշխատավարձի սանդղակին համապատասխան.
3) պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից՝ աշխատավարձի սանդղակին համապատասխան.
4) հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումը իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն պես՝ աշխատավարձի սանդղակին համապատասխան.

3, «**Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 6**

«**Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ**

Հարց

Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը

1) Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար.
2) Միայն Ազգային ժողովի ընդունած օրենքները.
3) Միայն կառավարության ընդունած որոշումները.
4) Միայն վարչապետի ընդունած որոշումները:

(1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է անհատական իրավական ակտը

1) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.
2) Գրավոր փաստաթուղթ, որը վերաբերվում է միայն դրանում անհատապես նշված անձանց համար.
3) նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց.
4) Միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:

(3, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է ներքին իրավական ակտը

1) նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ

աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից

2) միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:
3) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.
4) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են.

(1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)